ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2017թ. թիվ 478-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի
Ն 222-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17-րդ կետի «ա» ենթակետով, հաշվի առնելով կադրային փոփոխությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. հուլիսի 19-ի «Լոռու մարզի առողջապահական ընկերությունների տնօրենների ընտրության /նշանակման/ մրցութային հանձնաժողովի անդամության թեկնածուների ցուցակը հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2014 թվականի հունիսի 6-ի թիվ 201-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 222-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 7-րդ տողում «մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար» բառերը փոխարինել «մարզպետարանի աշխատակազմի ղեկավար» բառերով;

2) հավելվածից հանել 14-րդ տողը;

3) 22-րդ տողում «մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ» բառերը փոխարինել «մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2017թ. նոյեմբերի 21
ք.Վանաձոր